

ՀՍԽՀ ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ
ՊԵՏՎԱՐԿԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՑԱՆՔԻ
ԿՈԼԵԿՏԻՎ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ՀՍԽՀ ՊԵՏԱԾԽ ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1938 թ.

368
Ա-64

1 MAR 2010

հասարակական այլ կազմակերպություններին հետ, պայմանագրեր կնքելով, յետք միայն այդ կազմակերպություններում պայմանագրեր կնքելու իրավունք ունեն:

§ 3. Ապահովագրության պայմանագրերին կնքման համար անհրաժեշտ է, վոր կոլեկտիվի ապահովագրվող անդամների թիվը, տվյալ կոլեկտիվին անդամների 50⁰/₀-ից պակաս չլինի: Ապահովագրության պայմանագրերի ժամկետի ընթացքում, ապահովագրվածների թիվը 50⁰/₀-ից ցած լինելու դեպքում, պայմանագիրը չի խախտվում: Պայմանագիր կնքող իրաբանական անձն ապահովագրող և հանդիսանում:

Ծանոթություն: Ապահովագրող կազմակերպության լիվիդացիայի դեպքում, ապահովագրությունը, մինչև նրա վկայականում ցույց տված ժամկետը չարունակելու կարգը սահմանվում է հատուկ համաձայնությամբ, — կոլեկտիվ ապահովագրման մեջ կարող են ընդգրկվել չափահասության հասած բոլոր աշխատավորները, յետք ապահովագրման ցանկության մասին հայտարարություն տալու ժամանակ, նրանք չեն գտնվում հիվանդության պատճառով արձակուրդում: Ապահովագրվողներից բժշկական քննություն չի պահանջվում:

Ծանոթություն, 1. Կոլտնտեսությունների և կոոպերացված տնայնագործների

բի աշխատունակությունը լրիվ կորցրած հաշմանդամները և 60-տարին անց անձինք չեն ապահովագրվում:

2. Հղիության պատճառով, արձակուրդով ոգտվող այն կանայք, վորոնք ապահովագրվելու ցանկություն են հայտնում, ընդգրկվում են կոլեկտիվ ապահովագրության մեջ:

3. Յերկու և ավելի կոլեկտիվներում միաժամանակ ապահովագրվելը թույլ չի տրվում, յետք անգամ ապահովագրման դումարն այդ յերկու կոլեկտիվներում չգերազանցի § 7-ում սահմանված 2000 ռուբլի առավելագույն դումարին:

§ 4. Խոշոր ձեռնարկներում և հիմնարկներում թույլատրվում է կոլեկտիվ ապահովագրության պայմանագրեր կնքել առանձին, կամ մի քանի ցեխերի բաժինների, սեկտորների և կազմակերպչական այլ բաժանումների համար, պայմանով, վոր ապահովագրմանը մասնակցեն ապահովագրվող ցեխի, բաժնի, սեկտորի և այլ բաժանումների կազմի 50⁰/₀-ից վոչ պակասը:

Միևնույն կոլտնտեսության անդամների, տարբեր դյուղերում և բնակավայրերում ապրելու դեպքում, թույլատրվում է ապահովագրության պայմանագիր կնքել ընտ դյուղի և բնակավայրի, պայմանով, վոր տվյալ դյուղում և բնակավայրում ապրող կոլտնտեսական

ների 50 0/0-ից վոչ պակասը մասնակցեն ապահովագրութեան մեջ:

§ 5. Կուլեկտիվ ապահովագրութեան կնքելու համար, ապահովագրող կազմակերպութեանը պետաշխնայդրամարկղին ներկայացնում է ապահովագրվողների, սահմանված ձևի ցուցակը յերկու որինակից:

Ապահովագրութեանն ընդունելիս պետաշխնայդրամարկղն ապահովագրողին տալիս է ապահովագրման վկայագիր, կցելով նրան ապահովագրի և պետաշխնայդրամարկղների կողմից ստորագրած, ապահովագրվածների անվանական ցուցակը:

§ 6. Բոլոր նոր ապահովագրվողների, ինչպես և ապահովագրվածների շարքից դուրս յեկողների համար, ապահովագրողը յուրաքանչյուր ամիս յերկու որինակից լրացուցիչ ցուցակներ է ներկայացնում, վորից մեկը խնայդրամարկղի ստորագրութեամբ վերադարձվում է ապահովագրին, վորպես ապահովագրի փաստաթուղթ:

§ 7. Առանձին կուլեկտիվի ապահովագրութեանը կնքվում է բոլոր ապահովագրվողների համար հաշտար դումարով աշն է-500, 1000, 1500 և կամ 2000 ռուբլու չափով ամեն մեկի համար:

Մանրութիւն.— Բանվոր և ծառայողների կուլեկտիվների համար, կարող են սահմանվել ապահովագրութեան յերկու

չափ-բարձր, մեկ անձի համար 2000 ռուբլի և ցածր, բանվոր ծառայողների ավելի պակաս աշխատավարձ ստացողների համար, վորը բարձր չափի 50 0/0-ից պակաս չպետք է լինի: Մինիմալ (փոքրացրած), դումարով ապահովագրված անձանց թիվը չպետք է զերազանցի տվյալ կուլեկտիվի ապահովագրվածների 15 0/0-ից: Նման զեպքերում ապահովագրվողն ապահովագրվածների յուրաքանչյուր խմբի համար առանձին ցուցակներ է ներկայացնում տարբեր դումարներով: Ապահովագրերը նույնպես տրվում են այդ յուրաքանչյուր խմբի համար առանձին: Այդ նույն կարգը պահպանվում է և հետադայում, խմբը մեկ նոր ընդունվող և հեռացողներէ մասին լրացուցիչ ցուցակներ տալու դեպքում:

§ 8. Կուլեկտիվ ապահովագրութեան մեջ բոլոր նոր մտնողներն ընդգրկվում են նրա մեջ, յեթե միայն մինչև ապահովագրվելու մասին ցանկութեան հայտնելը, ապահովագրվողը վերջին մեկ ամսվա ընթացքում հինգ որից ավելի տեղութեան ունեցող աշխատանքի ընդհատում հիմանդութեան պատճառով չի ունեցել:

Նոր ապահովագրվող անձինք, ընդունվում են մոտակա ամսի աշն որից սկսած, վո-

րով սկսված և ապահովագրությունը մինչև
ապահովագրի մեջ ցույց տված տարվա վերջը:

§ 9. Ապահովագիր տված պետաշխնայերա-
մարկդին, ապահովագրության վարձատրու-
թյան վճարման պահանջները պետք է ներկա-
յացնել, վոչ ուչ Միութենական որենսդրու-
թյամբ սահմանված վաղեմության ժամկե-
տից:

Այդ ժամկետն անցնելուց հետո ներկայաց-
րած պահանջները բավարարման յենթակա չեն:

§ 10. Ապահովագրողը պարտավոր է,
պետաշխնայերամարկդի պահանջով, նրա լիա-
զորին հնարավորություն տալ քառուղեյու կրն-
բած կոչեկտիվ ապահովագրության փաստա-
թղթերն, ու նյութերը:

II. ՊՍՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

§ 11. Կյանքի կոչեկտիվ ապահովագրու-
թյամբ Պետաշխնայերամարկդը և Պետ-
վարկային գլխավոր վարչությունը պատաս-
խանատու յեն՝ ա) ապահովագրվածի վորեկ
պատճառով մեռնելու համար ե բ) դժբախտ
գատահարներին աշխատունակություն ընդ-
միջտ (լրիվ կամ մասնակի) կորցնելու համար:
500 ուրբլու ապահովագրության վճարը
մեծվում է տարեկան 6 ու. չափով:

Ավել գումարով՝ 1000, 1500 և 2000 ուրբ.
ապահովագրելու դեպքում ապվճարը գանձ-
վում է համարադատախանարար տարեկան 12,
18 և 24 ու. չափով:

§ 12. Ապահովագրությունը կնքվում է
ժեկ տարի ժամանակով: Տարին անցնելուց հե-
տո ապահովագրությունը կարելի յեն նորոգել
նորից մեկ տարով: Ապահովագրության նո-
րոգման, ինչպես և նոր ապահովագրության
կնքման ժամանակ, անհրաժեշտ է, վոր ապա-
հովագրության մեջ մասնակցեն ապահովա-
գրությունը նորոգող կոչեկտիվի աշխատավոր-
ների 50 0/0-ից վոչ պակասը:

Ապահովագրության նորոգումը կարող է
ձևակերպվել կամ նոր ապահովագիր տալով և
կամ նախկին ապահովագրի վրա մակագրու-
թյուն անելով:

Առանց նոր վկայագիր տալու, ապահովա-
գրությունը նորոգելիս, յենթե ապահովագրու-
թյան պայմաններ չեն փոխվել, հնի վրա կա-
տարվող մակագրությունը պետք է ցույց տա
նորոգվող, ապահովագրության սկզբի և վերջի
ժամկետները: Իսկ յենթե ապահովագրության
պայմանները փոխվում են, ապա մակագրու-
թյան մեջ նշվում է՝ ա) ապահովագրե-
լու սկիզբն ու վերջը, բ) ապահովա-
գրության սկզբին յեկած անձանց թի-
վը, գ) ապահովագրական դումարները, դ)
Յեկ ապահովագրվածից պահանջվող ա-
պահովագրական վճարի չափը և յեն) ապահո-
վագրողն ինչ թվերում է ծուծելու ապահովա-
գրավճարները: Ապահովագրություն կրկնելիս,
ապահովագրվածների համար նոր ցուցակ

կաղմել չի պահանջվում: Կորսնորսություններ
րի բոլոր այն անդամները, վորոնք ապահո-
վագրությունը կրկնելիս 60 տարիքին են հա-
սել, կարող են նորից մտցվել վերանորոգվող
ապահովագրության մեջ և այնքան տարով,
վորքան տարի առանց ընդհատումների նրանք
յեղել են ապահովագրված մինչև 60 տարիքին
հասնելը:

Ծանոթություն.— Ապահովագրու-
թյունը վերանորոգելիս, ապահովագրողի
համաձայնությամբ, ապահովագրության
մեջ կարող են մտցվել նաև այն ապահո-
վագրվածները, վորոնք տվյալ կորեկտի-
վից հետոցել են ապահովագրման տարվա
2-րդ կիսամյակում (վոչ հիվանդության
կամ հաշմանդամության պատճառներով):

§ 13. Ապահովագրման պատասխանատու-
թյունը սկսվում է այն օրվա ժամը 24-ից, վոր
օրն ապահովագրվածը դրամարկի և մուծել
ապահովագրավարձի վճարը:

Այդ նույն օրը ցույց է տրվում ապահո-
վագրի վրա, վորպես ապահովագրման սկզբի
ժամկետ, անկախ նրանից, թե վոր օր է տրե-
ված ապահովագիրը:

§ 14. Յուրաքանչյուր ժամկետի ապահո-
վագրման վճարներն ապահովագրողը մուծում
է միաժամանակ բոլոր ապահովագրվածների
համար, նախորոք և վոչ ուշ քան ապահովագրի
մեջ ցույց տված ժամկետը: Ապահովագրման

վճարները ժամկետից զատ, կարող են մուծվել
և տարվա, և կիսամյակի, և նրա մեկ յերրոր-
դի, և մեկ քառորդի, ինչպես և յուրաքանչյուր
ամսվա համար:

Ապահովագրման վճարները մուծելու հետ
հեկ տեղ, բացի նոր ապահովագրվողների
լրացուցիչ ցուցակից, ապահովագրողը ներկա-
յացնում է նաև ապահովագրությունից դուրս
յեկածների ցուցակը:

Ապահովագրում սահմանված ժամկետնե-
րից մեկում, ապահովագրման վճարները
մուտք չլինելու դեպքում ՊԱՌԴ-ի և ՊՎ-ի վար-
չության ապահովագրության նկատմամբ ու-
նեցած պատասխանատվությունը վերանում է,
սկսած այն օրվա ժամը 24-ից, վոր օրը մուծ-
ված է ապահովագրման վճարը:

Ծանոթություն.— Ապահովագրողնե-
րի միջնորդությամբ թույլատրվում է ըն-
դունել կորեկտիվ ապահովագրության
ժամկետանց վճարները վոչ ուշ քան ժամ-
կետանցից մեկ ամիս անց, բայց ՊԱՌԴ-ի
և ՊՎ-ի վարչությունը պատասխանատու
չէ այդ ժամկետանցի ժամանակամիջոցում
տեղի ունեցած ապահովագրման դեպքերի
համար:

§ 15. Ապահովագրվածները ապահովագրման
վճարները մուծում են այն ժամկետներին, վոր
սահմանված է ապահովագրողի կողմից, այն
հաշվով, վորպեսզի վերջինս հնարավորու-

Թյուն ունենա իր հերթին այլ վճարները խնայողությամբ մուծել ապահովագրի մեջ նշված ժամկետներում: Այն ապահովագրվածները, վորոնք ապահովագրողին հերթական վճարները չեն մտցնում, հնչվում են ապահովագրությունից դուրս:

Ծանոթութիւն.— Այն ապահովագրութիւնները, վորոնք արձակուրդի կամ դործուղման պատճառով ապահովագրական հերթական վճարումները ժամանակին չեն վճարի կհամարվեն ապահովագրությունից դուրս:

§ 16. Ապահովագրության վճարները ժամանակին չմուծողները (տես § 15) կամ անձնական ցանկությամբ ապահովագրվածների կազմից դուրս չեկած անձանց նկատմամբ, ապահովագրական պատասխանատվությունը դադարեցվում է այն օրվա ժամը 24-ից սկսած առ փոքր մուծված է նրանց ապ. վճարները: Յերբ ապահովագրվածը թողնում է ձեռնարկի կամ հիմնարկի աշխատանքը, կամ դուրս է գալիս կոլտնտեսությունից կամ արտելից, նրա նկատմամբ ապահովագրական պատասխանատվությունը չարունակվում է մինչև պայմանագրի ժամկետի վերջը, յեթե նրա համար ապ. վճարները մուծվում են:

§ 17. Հիվանդության պատճառով, արձակուրդում գտնվող ապահովագրվածների համար ապ. վճարների ժամկետի յերկարացումը

Թույլ է տրվում հիվանդության ժամանակի չափով: Ապահովագրության պատասխանատվությունն այդպիսի անձանց նկատմամբ պահպանվում է ապահովագրական վճարների յերկարացման ամբողջ ժամանակամիջոցում:

Ապահովագրվածը հիվանդության ընթացքում չմուծած վճարումները կատարում է աշխատանքի գնալուց հետո, հերթական վճարումների հետ միասին: Ապահովագրվածի մահվան կամ հաշմանդամության դեպքում հերթական ապ. վճարները մինչև ապահովագրության ժամկետի վերջը պահվում են ապահովագրական վարձատրությունից:

Նման անձանց, նրանց հիվանդության շրջանում ապ. վճարները չմուծելու պատճառի մասին ապահովագրողը Պետաշխնայողամարկդին տեղեկանք է ներկայացնում, նոր ապահովագրվողների և ապահովագրությունից դուրս յեկողների համար սահմանված կարգով (տես § 6):

III. ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

§ 18. Կոլեկտիվ ապահովագրությամբ ապահովագրվածների մահվան դեպքում ապահովագրական գումարը վճարվում է անկախ նրա պատճառից, բացի մահվան այն դեպքերից՝ ա. ապահովագրական գումարը ստանալու համար նշանակված անձի չարամտության, բ. ապահովագրվածի նկատմամբ սոցիա-

լախան պաշտպանութեան զերեւոյն միջոց
կիրառելու և դ. ռազմական գործողութիւններ
ի հետեւանքով առաջացած մահվան դեպքե-
րից:

19. Ապահովագրվածի մահվան դեպքում
ապահովագրութեան գումարը վճարվում է
անմիջապէս, § 20-ում ցույց տված փաստաթղթը
թերը ներկայացնելուն պէս:

Ապահովագրութեան վարձատրութիւնը
տրվում է այն անձին կամ անձանց, փորձեց
ապահովագրութիւնը կնքող կազմակերպու-
թեան հասցեյին ուղղած իր հայտարարու-
թեամբ կամ ցուցակի մէջ նշել եր ապահո-
վագրվածը, յետեւ ապահովագրվածի կենդա-
նութեան ժամանակ նման ցուցմունք չի տրվել,
ապա ապահովագրական գումարը տրվում է
նրա որինական ժառանգներին: Ապահովագր-
վածն իրավունք ունի փոխել ապահովագրա-
կան գումարի ստանալու համար նշանակված
անձին, այդ մասին համապատասխան հայտա-
րարութիւն ներկայացնելով ապահովագրու-
թիւնը կնքող կազմակերպութեանը (ապահո-
վագրողին):

Ապահովագրական գումարը ստանալու մա-
սին ապահովագրվածների հայտարարութեան
վրա յեղած ստորագրութիւնները հաստատ-
վում են իր աշխատավայրի վարչութեան, տեղ-
կոմի կամ կոլանտեսութեան կամ արտելի վար-
չութեան կողմից:

§ 20. Ապահովագրութեան գումարն ստանա-
լու համար ապահովագրողը պետք է ապահո-
վագրութիւնն ընդունած Պետականագրա-
մարկիին ներկայացնի հետեւյալ փաստաթղթ-
երը:—

ա. Չազսի վկայականն ապահովագրվածի
մահվան մասին:

բ. Հիվանդին բուժող բժշկի վկայականը՝
մահվան պատճառի մասին, յետեւ զազսը վկա-
յականում մահվան պատճառը չի ցույց տվել:

գ. Ապահովագրական գումարը ստանալու
համար անձնավորութիւն նշանակելու հայ-
տարարութիւնը, յետեւ ապահովագրվածը
այդպիսին ներկայացրել է ապահովագրողին:

Ծանոթութիւն.— 1. Յետեւ բոնի
մահ է տեղի ունեցել, ապա պահանջվում է
ներկայացնել ապահովագրվածի մահվան
պատճառը պարզելու համար կատարած
քննութիւնների հաստատված պատճեն:

2. Ապահովագրական գումարը ստա-
նալու համար նշանակված անձի դեմ քնն-
չական գործ սկսելու դեպքում, պահանջ-
վում է ներկայացնել ուժի մէջ մտած դա-
տական վճռի հաստատված պատճեն և
կամ թե դատական իշխանութեան վորո-
շումը քննութեան դադարեցման մասին:

§ 21. Ապահովագրվածի մահվան համար
տարվող ապահովագրական վարձատրութիւն-
նից պահվում է ապահովագրվածի կողմից

չվճարած ապահովագրման բոլոր մուծումները, մինչև ապահովագրության վերջին ժամկետը:

IV. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԺԲԱՆՏ ՊԱՆՏԱՐԻՑ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

22. ՊԱՆԴ-ի և ՊՎ-ի վարչությունն ապահովագրվածի ապ. վարձատրությունը վճարում է դժբախտ պատահարի հետևանքով ընդմիջող աշխատունակության ընթացքում մասնակի կորցնելու դեպքում: «Դժբախտ պատահար»-ի տակ հասկացվում է հանկարծակի, ապահովագրվածի կամ քից անկախ արտաքինից նրա մարմնի վրա ազդած և ապահովագրվածին մահ, կամ նրա առողջության վնաս պատճառելու ամեն մի միջադեպ: Համաձայն դրա ՊԱՆԴ-ի և ՊՎ-ի վարչությունը պատասխանատու չէ որինակ հետևվյալ պատճառներից առաջացած դժբախտ պատահարների համար՝

ա. Զբոսըեղից, յերկրաչարժից, հողմից, հրդեհից, պայթուծից, ժլվելուց, սառչելուց և ցրտահարից, ջրասուզ լինելուց, վորեև առարկայի ընկնելուց, ապահովագրվածի ընկնելուց, չարամիտների հարձակումից:

բ. Կայծակահար լինելուց, ելեքարականության խտրելուց:

գ. Մեքենաների և մեխանիզմների գործողություններից, ամեն տեսակի գործիքներից, պրիւրներներից և այլ առարկաներից ոգավելուց:


դ. Ելեքարուքարչի, դնացքի, ավառյի և այլնի խորտակումից և հարվածից:

յե. Արեվահար լինելուց, և զանազան ճառագայթների ազդեցությունից, ինչպես ունեղենյան և այլ ճառագայթներից:

զ. Վնասարար և թունավոր մթերքներից և առարկաներից հանկարծակի թունավորվելուց և վնասարար գոլորչիներից ու գազերից խեղդվելուց:

Ծանոթություն. — 1. Յեթե դժբախտ պատահարի հետևանքով թեկուզ և առանց արտաքին ազդեցության, ապահովագրվածը — ջղային կամ հոգեկան հիվանդություն ստանա, վոր հետագայում ապահովագրվածին հաշմանդամության հասցրնի, ապա այս նշված դեպքի համար ՊԱՆԴ-ի և ՊՎ-ի վարչությունը պատասխանատու չէ վորպես դժբախտ պատահարի:

2. Դժբախտ պատահարներ չեն հաշվում ամեն տեսակի հիվանդություններ ու նրանց հետևանքները, յեթե անգամ նրանք տեղի չեն ունեցել ապահովագրվածի պաշտոնական ծառայության ժամանակ, բուժման հետ կապված ինչպես և վերահապտյան հետևանք յեղած մարմնական ամեն տեսակի վնասվածքներ ստանալու յեթե վերջիններիս չեն առաջացել այն դժբախտ պատահարներից, վորոնց



համար ՊԱՍԻ-ի և ՊՎ-ի վարչությունը պատասխանատու չե. ապահովագրվածի ինքնասպանութան փորձ անելու հետեւան բով առողջության վնասումը, ալկոհոլով թունավորվելը, ռազմական զործողությունների հետեւանքները:

§ 23. Ապահովագրվածի հաշմանդամության հարցը լուծվում է դժբախտ պատահարի հետեւանքով կատարված բուժումն ավարտելուց հետո, բժշկական եքսպերտիզայի յեղքակացության հիման վրա:

Ապահովագրվածի աշխատունակության ընդմիջտ և լրիվ կերպով կորցնելու դեպքում ՊԱՍԻ-ի և ՊՎ-ի վարչությունը նրան վճարում է ապ. վարձատրության լրիվ գումարը, իսկ աշխատունակության մասնակի ընդմիջտ դեպքում տրվում է ապ. վարձատրություն այնքան տոկոսը, վորքան տոկոսով նա կորցրել է աշխատունակությունը:

Ապահովագրվածի աշխատունակության կորստի աստիճանը վորոշում է ՊԱՍԻ-ի և ՊՎ-ի գլխավոր վարչությունը հետեւյալ նորմաններով. —

ա. լրիվ հարյուր տոկոսով հաշմանդամություն համարվում է տեսողության յերկու աչքով լրիվ կորուստը, յերկու թեւերի կամ յերկու ձեռքի լրիվ կորուստը, յերկու վոտքի կամ յերկու վոտքերի թաթերի կորուստը, մեկ թեւի կամ ձեռքի և կամ մեկ վոտքի կամ նրա

թաթի միաժամանակ կորցնելը, ինչպես և չբուժվող հոգեկան հիվանդությունը:

բ. Վոչ լրիվ հաշմանդամությունն վորակվում է հետեւյալ աղյուսակով:

Լ Ր Ի Վ Կ Ո Ր Ո Ւ Ս Տ . ~	Կազմում է
Այ թեւի կամ աջ ձեռքի	70 տոկոս
Ձախ թեւի կամ ձախ ձեռքի	50 »
Մեկ վոտքի ծունկից վեր	60 »
Մեկ վոտքի ծունկից ցած կամ թաթի	50 »
Տեսողություն մեկ աչքի	30 »
Կողմ թյուն յերկու ականջի	50 »
Կողմ թյուն մեկ ականջի	10 »
Աջ ձեռքի բութ մատի	25 »
Աջ ձեռքի ցուցամատի	20 »
Ձախ ձեռքի բութ մատի	20 »
Ձախ ձեռքի ցուցամատի	15 »
Աջ ձնոթի վորեւի ալ մատի	8 »
Ձախ ձնոթի վորեւի ալ մատի	5 »
Վոտքի բութ մատի	8 »
Վոտքի վորեւի ալ մատի	3 »

Վերեւում հիշված մարմնի մասերից մի քանիսի կորստի դեպքում հաշմանդամության աստիճանը վորոշվում է աշխատունակության կորստի վերահիշյալ չափերի գումարից — սա — կայն վոչ ամեկ քան հարյուր տոկոս:

Մարմնի մասերի և անդամների լրիվ և չբուժիչ կաթվածը և նրանց լրիվ անշարժու-

թյունը, վոր առաջացել է դժբախտ պատահա-
րից՝ հավասարվում է նրանց լրիվ կորստին։
Նրանց մասնակի անպետքության դեպքում հա-
մապատասխանաբար կիրառվում է հաշմանդա-
մության ատտիճանի պակասեցում։

Դժբախտ պատահարի վերոհիշյալ ցան-
կում չնչված հաշմանդամություն առաջանա-
լու դեպքում ընդմիջտ կորցրած աշխատունա-
կության ատտիճանը վորոշվում է բժշկական
էքսպերտիզայի բյուրոյի յեղրակացության
հիման վրա։

ՊԱՆԴ-ի և ՊՎ-ի վարչությունը պատաս-
խանատու չէ ապահովագրվածի աշխատունա-
կության այն կորստի համար, վոր նա ունեցել
է դժբախտ պատահարին հանդիպելու մոմեն-
տին։

§ 24. Ապահովագրվածի հետ տեղի ունեցած
դժբախտ պատահարի դեպքում ապահովագր-
վողը, ապահովագրվածը, ինքը կամ ապահո-
վագրական վարձատրություն ստանալու հա-
մար նշանակված անձնավորությունը խնայ-
դրամարկդին պետք է ներկայացնեն դժբախտ
պատահարի մասին կազմած արձանագրության
պատճեն, իսկ յեթե նման արձանագրություն չի
կազմվել, ապա համապատասխան անպայման
փաստաթուղթ այն մասին, վոր դժբախտ պա-
տահարը տեղի չէ ունեցել։

§ 25. Աշխատունակության ընդմիջտ մաս-
նակի կամ լրիվ կորուստ առաջացրած դժբախտ

պատահարից հետո, տուժած անձնավորության
ապահովագրումը շարունակվում է գործող
վկայագրի պայմանների հիման վրա, ապահո-
վագրության ուժի մեջ լինելու ամբողջ ժամա-
նակաշրջանում, նախընթաց դժբախտ պատա-
հարի լուծարքից հետո, ՊԱՆԴ-ի և ՊՎ-ի վար-
չությունը պատասխանատու չէ ապահովագր-
վածի նաև հետագա դժբախտ պատահարներից
առաջացող հաշմանդամության համար։

Հետագա բոլոր դժբախտ պատահարներից
առաջացած աշխատունակության կորստի ատ-
տիճանը վորոշվում է՝ բոլոր դժբախտ պատա-
հարներից առաջացած ընդհանուր հաշմանդա-
մությունից հանելով այն հաշմանդամությա-
ն ատտիճանը, վորը ստացվել է նախընթաց դժ-
բախտ պատահարներից։


§ 26. Հաշմանդամության համար ապ. վար-
ձատրության վճարելուց հետո ապահովագր-
վածի մեռնելու դեպքում նրան ապ. վճարը
տրվում է լրիվ չափով անկախ նրանից, թե
մահը դժբախտ պատահարի հետ է կապված,
թե առաջացել է այլ պատճառից։

Բոլոր ցեխերով, գործարաններով և կո-
տրնտեսություններով կոլեկտիվներն ապահո-
ւվազրենք մեր կյանքը:

Փոխառություն և ավանդներին առնթեր,
կյանքի կոլեկտիվ ապահովագրությունը
խնայողամարկդներում հանդիսանում է միջոց-
ների մոբիլիզացիայի աղբյուրներից մեկը և
ծառայում է բանվորների, ծառայողների և
աշխատավոր գյուղացիության նյութական
կենցաղային պայմանների բարելավման մի-
ջոց:

ԱՇԽԱՏԱՎՈՐ !

Մասնակցելով կյանքի կոլեկտիվ ապահո-
ւվագրությունը, դու բերում ես ոգուտ քեզ և
ոգնում ես սոցիալիստական չինարարու-
թյունը:



Զ Ր Ի

43.725

Պետերապի տպարան

Գառվեր 1042,

Դրավիկա. 0210

Տիրաժ 3000